ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0009 ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-771

N ԴԴ -1 - Ե - 8151

«30» սեպտեմբերի 2022թ.

<<ՋԻԷՅ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի տնօրեն տիկին
Անի Գալստյանին

Հարգելի տիկին Գալստյան,

Դատական դեպարտամենտի կարիքների համար տպիչների, պատճենահանող սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություն) ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 25.07.2022թ. կնքվել է N «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/07-18» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի գինը կազմում է 7 000 000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ:

Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման նպատակով նախատեսվել են ֆինանսական միջոցներ՝ 150 000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով և առկա ֆինանսական միջոցների շրջանակներում համաձայնագիր կնքելու նպատակով Դատական դեպարտամենտի կողմից 16.08.2022թ. թիվ ԴԴ-3-Ե-6638 գրությամբ ուղարկվել է համաձայնագիր կնքելու առաջարկ՝ կից համաձայնագրի նախագծով: Դատական դեպարտամենտի կողմից ծանուցումն ուղարկվելուն հաջորդող օրվանից հաշված Պայմանագրի 7.13 կետով սահմանված ժամկետում Ձեր կողմից Դատական դեպարտամենտ չի ներկայացվել Ձեր կողմից հաստատված համաձայանգիրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել են Պայմանագրի 7.13 կետով սահմանված պարտավորությունները, և ղեկավարվելով Պայմանագրի 7.13 կետի պահանջներով՝ տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտը՝

1. միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը,
2. ձեռնարկում է Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցներ:

Հարգանքով՝

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ